Կարգապահական գործ թիվ ԿԳ-15165

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի ապրիլի 27-ի թիվ 91-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/69-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՂԱԼՈՒՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև Պալատ) խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, Խորհրդի անդամներ՝ Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի, Տիգրան Խուրշուդյանի, Լուսինե Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Կարեն Ղալումյանին (արտոնագիր թիվ 484) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

21.08.2015 թվականին Պալատ է ստացվել քաղաքացի Բելլա Խաչատրյանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը՝ փաստաբան Կարեն Ղալումյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Դիմողը մասնավորապես նշել է, որ 2014թ. դեկտեմբեր ամսին դիմել է փաստաբան Կարեն Ղալումյանին քաղաքացիական գործով իր շահերը ներկայացնելու համար: Բելլա Խաչատրյանի պնդմամբ ինքը Կարեն Ղալումյանին՝ առանց պայմանագիր կնքելու, վճարել է 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, ինչպես նաև հետագայում տաքսու վարորդի միջոցով փոխանցել է նաև 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլլար գումար: Ըստ Դիմողի՝ Պատասխանող Կարեն Ղալումյանը չի մասնակցել դատական նիստերին՝ հորդորելով Դիմողին ներկայանալ և դատարանում հայտարարել, որ իր փաստաբանը մեկ այլ նիստի է մասնակցում, ինչպես նաև չի ներկայացրել հակընդդեմ հայց, ինչի արդյունքում դատական ակտը կայացվել է ի վնաս Դիմողի: Բելլա Խաչատրյանը հավելել է նաև, որ չնայած իր հորդորներին, Կարեն Ղալումյանն այդպես էլ չի բողոքարկել ի վնաս իրեն կայացված դատական ակտը վերաքննության կարգով:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 19.09.2015 թվականի թիվ 313-Ա/ԿԳ-15165 որոշմամբ փաստաբան Կարեն Ղալումյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.3 և 3.5.5 ենթակետերով սահմանված պահանջների խախտման հատկանիշներով:

Տվյալ կարգապահական վարույթով դիմող է ճանաչվել Բելլա Խաչատրյանը, կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Հարություն Հարությունյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողի պնդմամբ՝ Պատասխանողը, ծանոթանալով գործին, նախապես 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ կանխիկ գումար է վերցրել իր աշխատանքային գրասենյակում: Այդ ամենը կատարել է բանավոր, ոչ մի պայմանագիր չի կնքել, լիազորագիր չի տվել: Երկու նիստի է մասնակցել, որից հետո 2015 թվականի ապրիլի 30-ին զանգահարել է և պահանջել 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար գումար, ասելով որ այդ օրը պետք է հաշվետվություն ներկայացնի, պետք է վճարի, քանի որ ինքը Դիմողի պատճառով մտնում է վիճաբանությունների մեջ, գումարը պետք է գործը շարունակելու համար: Ըստ Դիմողի՝ Պատասխանողն իր ծանոթ տաքսու վարորդ Աշոտին ուղարկել է, որպեսզի նա գումարը վերցնի, և Դիմողի մորաքրոջ աղջկա ներկայությամբ գումարը փոխանցվել է վերջինիս: Դիմողը զանգահարել է Պատասխանողին, ով հայտնել է, որ գումարն իրեն փոխանցվել է: Դրանից հետո Պատասխանողը դատական նիստերին չի մասնակցել, հակընդդեմ հայց չի գրել՝ ասելով որ դեռ շատ ժամանակ կա: Կարեն Ղալումյանը հորդորել է Դիմողին ներկայանալ և դատարանում հայտարարել, որ իր փաստաբանը մեկ այլ նիստի է մասնակցում և Դիմողի պնդմամբ Պատասխանողը պատճառաբանել է, որ այդ ամենը Դիմողի շահերից է բխում և ինչքան հետաձգվի այդքան ավելի լավ: Բելլա Խաչատրյանը հավելել է նաև, որ 2015թ. հունիսի 03-ին վճիռ է կայացվել և վճռում գրված է, որ ինքը ոչինչ չի պահանջել և չնայած իր հորդորներին, Կարեն Ղալումյանն այդպես էլ չի բողոքարկել ի վնաս իրեն կայացված դատական ակտը վերաքննության կարգով, չնայած նրան, որ նախ ասել է, որ բավական ժամանակ կա բողոքարկելու, այնուհետև՝ հուլիսի 02-ին Դիմողի հարցին ի պատասխան ասել է, որ բողոքն ուղարկելու է հուլիսի 06-ին, մինչդեռ հուլիսի 03-ին բողոք բերելու ժամանակը սպառվում էր: Այնուհետև Դիմողը զանգահարել է Պատասխանողին՝ պահանջելով վճարված գումարը վերադարձնել, ինչին սկզբում դրական է պատասխանել Պատասխանողը, հետագայում ասել է թե ինչու պետք է ետ վերադարձնի՝ միաժամանակ հայտնելով որ չի հրաժարվում, որ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ և 300 (երեք հարյուր) ԱՄՆ դոլար գումար է վերցրել: Նշվածի արդյունքում խնդրել է Փաստաբան Կարեն Ղալումյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Սույն կարգապահական գործով տեղի ունեցած Խորհրդի նիստերին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.

Պատասխանողը 09.09.2015 թվականին ՀՀ փաստաբանների պալատին ներկայացրած բացատրությամբ չընդունելով դիմումի փաստերը, հայտնել է, որ գրեթե 20 տարի տևող մասնագիտական գործունեության ողջ ընթացքում որպես առաջնային արժեք

դիտարկել է վստահորդի շահը: Յուրաքանչյուր դեպքում այն սպասարկելու համար ներդրել է մասնագիտական կարողությունները, ժամանակն ու առողջությունը: Գործը կառուցել է վստահության վրա և միշտ երդմանը հավատարիմ է եղել: Դիմողի պարագայում ևս այդ սկզբունքով է առաջնորդվել և այն հանդիսանում է իր մարդկային էության մի մասը: Պատասխանողը հայտնել է նաև, որ այդ անգամ այդ վստահության հիման վրա կառուցված հարաբերությունը ձախողվել է: Ճանաչում է ձախողման փաստը, բայց խնդրում է ուշադրություն դարձնել, որ դիմումի տեքստում Դիմողը վերագրելով կոնկրետ վարքագիծ՝ բացի իրենից շրջանառում է նաև այլ անուներ, դատավոր Կյուրեղյան և փաստաբան Ամիրխանյան: Արդյունքում ի վերջո կայացած դատական ակտը թեև ի վնաս իրենց էր, բայց և չափազանց թույլ էր ու խոցելի. կայացվել էր դատական ակտ նյութական և դատավարական իրավունքի բազմաթիվ նորմերի չկիրառման ու սխալ մեկնաբանման հաշվին: Այսինքն, ըստ էության, ձախողում էր: Դիմումի տեքստում Դիմողի նշած տեղեկությունը փաստում է դատավորի և իր օգնական փաստաբանի կողմից դիմումի հեղինակի նկատմամբ գործադրված հոգեբանական ճնշման մասին: Վերջիններս ըստ էության Դիմողին հուսահատության են մատնել: Դիմողի մոտ, ի դեմս փաստաբանի ձևավորվել է թշնամու կերպարը:

Սույն կարգապահական գործով տեղի ունեցած Խորհրդի նիստերին Պատասխանողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

<u>4.Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձ, փաստաբան Հարություն Հարությունյանին, ով 24.11.2015թ. կազմել է եզրակացություն, համաձայն որի փաստաբան Կարեն Ղալումյանի կողմից խախտվել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.1.3 ենթակետով սահմանված պահանջները: Կարգապահական վարույթի շրջանակներում հարուցված մյուս ենթակետերի խախտման հատկանիշների մասով Դիմողի կողմից վկայակոչված փաստական հանգամանքները չեն հիմնավորվել:

Կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին 27 նոյեմբերի 2015թ.: Սույն գործով Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի ապրիլի 27-ին, ժամը 18:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (հասցե՝ ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5.<u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Պատասխանողը հանդիսացել է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ-0941/02/14 քաղաքացիական գործով պատասխանող Բելլա Խաչատրյանի ներկայացուցիչը (հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, դատարանի 03.06.2015թ. վճռի պատճենով):
2. Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ՏԴ-0941/02/14 քաղաքացիական գործով ընդդեմ Դիմողի ներկայացված է եղել բնակարանից վտարելու մասին պահանջ և դատարանի վճռով այդ մասով գործի վարույթը կարճվել է (հաստատվում է դատարանի վճռի պատճենով):
3. Դիմողի վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մուտք է եղել 02.07.2015թ-ին (հաստատվում է թիվ ՏԴ-0941/02/14 քաղաքացիական գործի վերաբերյալ www.datalex.am համակարգում տեղադրված տեղեկատվությամբ):

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պատասխանողի նկատմամբ 2006-2016թ. ընկած ժամանակահատվածում հարուցվել է 4 կարգապահական վարույթ՝ 28.12.2006թ., 27.08.2007թ., 14.12.2007թ., անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով (կարգապահական վարույթները կարճվել են արտոնություն կիրառելու հիմքով), ինչպես նաև 22.05.2009թ. դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, նիստին ուշանալու հատկանիշներով (ենթարկվել է կարգապահական պատասխանատվության - նկատողություն, տույժը մարվել է):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարեն Ղալումյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.

ա) Փաստաբան Կարեն Ղալումյանի կողմից Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու և վերջինիս օգտին չգործելու վերաբերյալ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1 կետի «Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չի գործել ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և արդյո՞ք այդ շահերը վեր չեն դասվել իր շահերից:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.7.2 կետի «Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը չգիտեր իրավունքի համապատասխան ճյուղը, թերի էր ուսումնասիրել կամ չէր ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող հանգամանքները, չէր կատարել հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.5.5 կետի «Փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:»

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

արդյո՞ք Պատասխանողը ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ չի տվել և չի պաշտպանել իր վստահորդին և հանդես չի եկել նրա անունից:

Դիմողը շեշտադրել է այն, որ փաստաբան Կարեն Ղալումյանը չի ներկայացել դատական նիստերին, չի ներկայացրել հակընդդեմ հայց, չի բողոքարկել ի վնաս իրեն կայացված դատական ակտը վերաքննության կարգով:

Ելնելով ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնից, Պալատի Խորհուրդը գտնում է, որ ակտիվ գործողության փաստ վկայակոչող կողմն ինքը պետք է ապացուցի այդ փաստի առկայությունը: Տվյալ դեպքում, Դիմողը պնդել է, որ պատասխանողը պետք է հակընդդեմ հայց ներկայացներ, հետևաբար ունեցել է հակընդդեմ հայց ներկայացնելու հանձնարարություն: Դիմողը չի ապացուցել այդ փաստը, որևէ ապացույցով: Ինչ վերաբերում է դատական նիստերին չներկայանալու և վճիռը չբողոքարկելու հարցերին, ապա Պալատի խորհուրդը հաշվի առնելով դատարանի թիվ ՏԴ-0941/02/14 քաղաքացիական գործով վճիռը, որի համաձայն ընդդեմ Դիմողի ներկայացված է եղել բնակարանից վտարելու մասին պահանջ և դատարանի վճռով այդ մասով գործի վարույթը կարճվել է, նաև այն, որ հենց դիմողն է դատարան ներկայացրել գործի քննությունը հետաձգելու մասին պատասխանողի միջնորդությունները, ինչպես նաև դիմողն իր դիմումում է նշել, որ փաստաբանը պարզաբանել է, որ գործի ձգձգումը իր շահերից է բխում, այսինքն դա տակտիկական նպատակ է հետապնդել, չի արձանագրում փաստաբանի կողմից խախտման դեպք:

Խորհուրդը նաև արձանագրում է, որ 03.06.2015թ. վճռի դեմ բերվել է վերաքննիչ բողոք, որը 02.07.2015թ-ին արդեն իսկ մուտք է եղել վերաքննիչ դատարանում:

բ) Փաստաբան Կարեն Ղալումյանի կողմից վստահորդի հետ գրավոր պայմանագիր չկնքելու վերաբերյալ.

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 3.1.3 կետի «Գործն ընդունելուց հետո, եթե այն կատարվելու է վճարովի հիմունքներով, ապա իրավական օգնություն ցույց տալու պայմանագիրը պետք է կնքվի հասարակ գրավոր ձևով փաստաբանական գրասենյակի կողմից: Նշված պայմանագիրը պետք է կնքվի ողջամիտ ժամկետում (հանձնարարությունը փաստացի ստանձնելու պահից երկու ամսվա ընթացքում), եթե գործի որոշ հանգամանքներ կամ ծառայության ծավալը ճշտելու անհրաժեշտություն կա»:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

- ***արդյո՞ք Պատասխանողը գործը կատարելու էր վճարովի հիմունքներով, և եթե այո,***
- ***արդյո՞ք գործն ընդունելուց հետո ողջամիտ ժամկետում կնքել է իրավական օգնություն ցույց տալու պայմանագիր:***

Ելնելով ապացուցման պարտականությունը բաշխելու կանոնից, Պալատի խորհուրդը գտնում է, որ գումար վճարելու փաստը պետք է ապացուցեր դիմողը, որը սակայն որևէ ապացույց այդ մասով չի ներկայացրել, իսկ դիմողն էլ առարկել է այդ փաստի դեմ: Այս պայմաններում երբ չի հաստատվել ծառայությունը վճարովի հիմունքներով կատարելու փաստը, Պալատի Խորհուրդը չի կարող արձանագրել Կանոնագրքի 3.1.3 ենթակետի խախտման փաստ, այն պարզ պատճառով, որ այս կանոնում խոսքը գնում է միայն վճարովի հիմունքներով ծառայություն մատուցելու դեպքի մասին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 19.09.2015 թվականի թիվ 313-Ա/ԿԳ-15165 որոշմամբ փաստաբան Կարեն Ղալումյանի (արտոնագիր թիվ 484) նկատմամբ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.6.1, 2.7.2, 3.1.3 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտում թույլ տալու հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել դիմող Բելլա Խաչատրյանին և փաստաբան Կարեն Ղալումյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյան